ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/44415-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-111-07.12.2021-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1478 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-111-07.12.2021-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը լրացնել նոր մասով, համաձայն որի՝ «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով արտակարգ իրավիճակի առաջացման հետևանքով գնման անհետաձգելի պահանջ է համարվում այն ապրանքների (ծառայությունների, աշխատանքների) գնման պահանջը, որն առաջացել է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավիճակների ի հայտ գալու արդյունքում, իսկ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով գնման անհետաձգելի պահանջ է համարվում այն ապրանքների (ծառայությունների, աշխատանքների) գնման պահանջը, որոնք պատվիրատուների՝ պետական (համայնքային) բյուջեի տվյալ տարվա ծախսային ծրագրերով նախատեսված չեն:

Նախագծի հիմնավորման համաձայն՝ «Նախագծի նպատակն է էապես նպաստել գնումների համակարգում ստվերային, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, ստեղծել այնպիսի իրավականկարգավորող համակարգ, որի դեպքում կերաշխավորվի պետական գնումներին տնտեսվարող սուբյեկտների մասնակցությունը և հավասար մրցակցությունը»:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ հրատապության հիմքով մեկ անձից գնում կատարելու համար անհրաժեշտ է դիտարկել հրատապ կարիքի առաջացման բոլոր հնարավոր դեպքերը՝ զսպելով այդպիսի կարիքի չբավարարման հնարավոր ռիսկերը:

Այսինքն հարկ է նկատի ունենալ, որ գնման կարիքների հրատապությունը և ժամանակի կոնկրետ պահին դրանք բավարարելու ակտուալությունը չի կարող սահմանափակվել միայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավիճակներով:

Նախագծով առաջարկվող իրավակարգավորումները ներդնելու միջոցով ոչ միայն հնարավոր չէ հասնել նախագծի առջև դրված նպատակի իրականացմանը, այլ այդ իրավակարգավորումների ներդրման արդյունքում կարող են ոտնահարվել պետական և հասարակական շահերը, ազգային անվտանգությունը և հասարակության առողջությունը: Նախագծով առաջարկվող իրավակարգավորումների ներդրման պարագայում սահմանափակվում է պետության՝ արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով, գնման անհետաձգելի պահանջ ծագելու պարագայում, մեկ անձից գնում կատարելու օրենսդրական հնարավորությունը, որի արդյունքում պետությունը կարող է զրկվել հասարակության անվտանգության և առողջության ապահովման իր պոզիտիվ պարտականության արդյունավետ իրականացման հնարավորությունից, որը հանդիսանում է պետության սահմանադրաիրավական գործառույթը: Գտնում ենք, որ հիմնավոր չի կարելի համարել նախագծով պետության պոզիտիվ պարտականության վերոնշյալ սահմանափակումը և քաղաքացու համար անհամաչափ ռիսկերի ստեղծումը, մասնավորապես՝

1) նախագծով առաջարկվող այն իրավակարգավորման բովանդակությունից, որի

համաձայն՝ «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով արտակարգ իրավիճակի առաջացման հետևանքով գնման անհետաձգելի պահանջ է համարվում այն ապրանքների (ծառայությունների, աշխատանքների) գնման պահանջը, որն առաջացել է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավիճակների ի հայտ գալու արդյունքում, ստացվում է, որ պետությունը կարող է մեկ անձից գնում կատարել միայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքով սահմանված իրավիճակների ի հայտ գալու դեպքում, այն է՝ որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակի, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման դեպքում:

Մասնավորապես՝ նախագծի վերոնշյալ կարգավորումից ստացվում է, որ պետությունը բնակչության պաշտպանության կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու և վերոնշյալ արտակարգ իրավիճակների առաջացումը թույլ չտալու նպատակով չի կարող իրականացնել մեկ անձից գնում, այլ այդ գնումը կարող է իրականացնել միայն այդ արտակարգ իրավիճակներն առաջանալուց հետո, նման մոտեցումը գտնում ենք անթույլատրելի է.

2) նախագծի այն իրավակարգավորումը, որի համաձայն՝ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով գնման անհետաձգելի պահանջ է համարվում այն ապրանքների (ծառայությունների, աշխատանքների) գնման պահանջը, որոնք պատվիրատուների՝ պետական (համայնքային) բյուջեի տվյալ տարվա ծախսային ծրագրերով նախատեսված չեն, նույնպես խնդրահարույց է, քանի որ հնարավոր է մի իրավիճակ, երբ պետությունը բնակչության պաշտպանության կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու և արտակարգ իրավիճակների առաջացումը թույլ չտալու նպատակով իրականացվող գործողությունների ապրանքների (ծառայությունների, աշխատանքների) գնման պահանջը նախատեսած լինի տվյալ տարվա պետական (համայնքային) բյուջեի ծախսային ծրագրերով, սակայն դրա հրատապությունից, մասնավորապես՝ արտակարգ իրավիճակի առաջացումը թույլ չտալու նպատակից ելնելով, անհրաժեշտ լինի գնումը կատարել մեկ անձից: Ավելին, հնարավոր են նաև դեպքեր, երբ կազմակերպված գնման մրցակցային ընթացակարգը չի կայանում, կամ կնքված պայմանագիրը պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանավորված միակողմանիորեն լուծվում է, և առկա է լինում հրատապ անհրաժեշտություն կարիքի բավարարման մասով:

Գործնականում հրատապության հիմքով մեկ անձից կատարվող գնումներն ի սկզբանե ներառված չեն լինում գնումների պլանում, դրանք պլանում լրացվում են հետագայում՝ հրատապ կարիքի առաջացման դեպքում՝ բյուջեում վերաբաշխում կատարելու կամ նոր հատկացումներ նախատեսվելու միջոցով:

Այս համատեքստում, կարծում ենք, որ նախաձեռնությունը խախտում է մասնավոր և հանրային շահերի հավասարակշռությունը, իսկ հանրային ֆինանսների կառավարման տեսանկյունից միանգամայն ընդունելի համարվող մեկ անձից գնումներ կատարելու կառուցակարգերի սահմանափակման նպատակադրումն անհրաժեշտ է իրացնել համակարգային և ինստիտուցիոնալ մակարդակում՝ զերծ մնալով հատվածական և չհիմնավորված լուծումներից:

Ուստի գտնում ենք, որ պետության այն լիազորությունների սահմանափակումը, որոնք կարող են կապված լինել պետության այնպիսի պոզիտիվ պարտականությունների իրականացման հետ, ինչպիսիք են, օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածով ամրագրված անձի կյանքի իրավունքի պաշտպանությունը, կամ հասարակության անվտանգության և առողջության ապահովումը, չեն կարող կամայական սահմանափակվել, օրինակ՝ գնումների համակարգում ստվերային, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակից ելնելով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող հոդվածը թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1478 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵՎՈՒՅՐՈՒ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Գնում-ների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապե-տության օրենքի նախագիծը *(Պ-III-07.12.2021-ՏՀ-010)* քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

22.12.2021
ՀԱՅԱՍՏԱՆԻ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-111-07.12.2021-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գնումների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքի 23-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2-րդ մասով.

«2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով արտակարգ իրավիճակի առաջացման հետեւանքով գնման անհետաձգելի պահանջ է համարվում այն ապրանքների (ծառայությունների, աշխատանքների) գնման պահանջը, որն առաջացել է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավիճակների ի հայտ գալու արդյունքում, իսկ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետեւանքով գնման անհետաձգելի պահանջ է համարվում այն ապրանքների (ծառայությունների, աշխատանքների) գնման պահանջը, որոնք պատվիրատուների՝ տվյալ տարվա պետական (համայնքային) բյուջեի ծախսային ծրագրերով նախատեսված չեն:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Նախագծի ընդունումը պայմանավորված է «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասում առկա տարընթերցումները վերացնելու եւ կոռուպցիոն ռիսկերի հնարավորինս սահմանափակման համար համապատասխան իրավական կարգավորումներ սահմանելու անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը, կարգավորման նպատակը եւ բնույթը

Նախագծով առաջարկվող իրավակարգավորման նպատակը կայանում է պետական գնումների համակարգում ստվերային, ինչպես նաեւ կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, ինչպես նաեւ իրավական-կարգավորող այնպիսի համակարգի ստեղծմանը նպաստելը, որի դեպքում հնարավորինս կերաշխավորվի պետական գնումներին տնտեսվարող սուբյեկտների մասնակցության արհեստական խոչընդոտների վերացմանը, մեկ աղբյուրից պետական գնումների մեխանիզմի չարաշահման եւ այդ մեխանիզմի օգտագործմամբ կոռուպցիոն գործարքների իրականացման հնարավորությունների գործնական սահմանափակմանը:

Այս տեսանկյունից Օրենքի 23-րդ հոդվածը բավականին խնդրահարույց է, քանի որ այն թույլ է տալիս պետական (համայնքային) բյուջեների միջոցների հաշվին, շրջանցելով պետական գնումների մրցութային մեխանիզմը, մեկ անձից կատարել գնում՝ գործնականում ցանկացած նպատակով եւ ցանկացած գումարի շրջանակներում, այն դեպքում՝ երբ մեկ անձից պետական գնումների մեխանիզմը նախատեսված է բացառիկ, այն է՝ չնախատեսված դեպքերի կամ

անկանխատեսելի հանգամանքների ի հայտ գալու պարագայում գնման հրատապ պահանջները բավարարելու համար:

Մասնավորապես, Օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված են մեկ անձից գնումներ կատարելու 5 հիմքեր, որոնցից 4-ը շատ կոնկրետ են եւ պատշաճ վերահսկողության պարագայում չեն կարող «կոռուպցիոն սողանցք» ապահովել գնումներ կատարողների համար: Այլ է խնդիրը 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքի պարագայում, ըստ որի՝ գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե. «արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետեւանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ եւ, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձեւերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել.»: Այս առումով «կոռուպցիոն սողանցքը» կայանում է «արտակարգ իրավիճակ» եւ «չնախատեսված այլ իրավիճակ» հասկացությունների խիստ կամային եւ տարածական մեկնաբանության մեջ (քանի որ Օրենքը չի սահմանում, թե որո՞նք են համարվում արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակներ), ինչն էլ թույլ է տալիս դրանք օգտագործել մրցույթներից խուսափելու համար:

3. Նախագծով առաջարկվող փոփոխությունները.

«Արտակարգ իրավիճակ» եւ «չնախատեսված այլ իրավիճակ» հասկացությունների հստակեցման նպատակով առաջարկվում է Օրենքի 23-րդ հոդվածում հստակեցնել նշված հասկացությունները, ընդ որում՝ հիմք ընդունելով եւ օգտագործելով արդեն իսկ գործող իրավական այլ ակտերով սահմանված հասկացություններն ու մեխանիզմները: Այսպես.

1. Առաջարկվում է որպես «արտակարգ իրավիճակ» ամրագրել այն իրավիճակները, որոնք սահմանված են «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, եւ որոնք, կարծում ենք, որեւէ մեկի մոտ տարընթերցում առաջացնել չի կարող: Համաձայն այդ օրենքի՝ «արտակարգ իրավիճակը» որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երեւույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի եւ գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետեւանքով ստեղծված իրավիճակն է, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների եւ մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման: Առաջարկվում է մեկ անձից գնումը թույլատրել հենց այսպիսի իրավիճակներից բխող պետական գնումների դեպքում՝ առանց գումարային սահմանափակման:

2. Որպես «չնախատեսված այլ իրավիճակ» առաջարկվում է սահմանել այն իրավիճակները, որոնց հետ կապված գնումներն ի սկզբանե չէին կարող կանխատեսվել եւ ծրագրավորվել պատվիրատուների համար՝ պետական (համայնքային) բյուջեները կազմելիս եւ հաստատելիս (քանի որ կանխատեսելի բոլոր իրավիճակների համար պետական անհրաժեշտ գնումները նախատեսվում են համապատասխան մարմինների կամ այլ պատվիրատուների բյուջետային ծրագրերով): Այս պարագայում չնախատեսված հրատապ գնման պահանջն իսկապես օբյեկտիվ բնույթ կունենա, ինչն էլ, բնականաբար, պետք է հիմնավորվի այդ նպատակով ընդունվելիք կառավարության որոշման նախագծում, իսկ մյուս կողմից էլ՝ էականորեն կհեշտանա նման իրավիճակներում պետական գնումների նկատմամբ վերահսկողության եւ հնարավոր չարաշահումների ապացուցման հնարավորությունները: